

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1978 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 8-ը Մայր Աթոռում հանդիսավորությամբ նշվեցին Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը, գահակալության 23-րդ տարեդարձը, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը և Կ. Պոլսի հայոց տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակը:

Սեպտեմբերի 19-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ամենայն Հայոց Հայրապետը պարգևատրվեց «Ժողովուրդների բարեկամության» բարձր շքանշանով՝ խաղաղության պաշտպանության օգտին հայրենասիրական Իր գործունեության և ծննդյան 70-ամյակի առթիվ:

Սեպտեմբերի 27-ին Երևանում, Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի պալատում, Հայաստանի հանրապետության մեծարգո նախագահը պաշտոնապես Հայոց Հայրապետին հանձնեց «Ժողովուրդների բարեկամության» շքանշանը հանդիսավոր իրադրության մեջ:

Այս առթիվ Հայոց Հայրապետի և Հայաստանի հանրապետության հարգելի պարոն նախագահի միջև փոխանակվեցին ճառեր:

Հոբելյանական վերոհիշյալ հանդիսություններին մասնակցելու համար սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ էին ժամանել բարձրաստիճան հայ հոգևորականներ, թեմական ներկայացուցիչներ, պատգամավորներ և հյուրեր:

Հայոց Հայրապետի հրավերով հանդիսություններին մասնակցում էր նաև ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, ինչպես նաև վրաց ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը:

Հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը ս. պատարագ մատուցեց Մայր տաճարում և ապա Վեհարանի գահասրահում շնորհավորանքներ ընդունեց Իր ծննդյան 70-ամյակի և գահակալության 23-րդ տարեդարձի առթիվ:

Հոկտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, հանդիսավորությամբ կատարվեց Մայր Աթոռի նորակառույց վանատան բացման արարողությունը՝ ի ներկայության Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության հայկական բաժնի գործերի վարիչ-տնօրեն տիար Ռոբերտ Կյուլպենկյանի:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակին:

Հոկտեմբերի 3-ին, երեքշաբթի օրը, տեղի ունեցավ հոգեհանգստյան մայանավոր պաշտոն՝ 1827 թվականի Օշականի ճակատամարտում զոհված հայ և ռուս զինվորների հիշատակին Էջմիածին քաղաքում 1834 թվականին կառուցված հուշարձանի առաջ: Այս առթիվ ծաղկեպսակներ դրվեցին հուշարձանի վրա հայ, ռուս և վրաց եկեղեցիների կողմից:

Նույն օրը, ժամը 17-ին, Մայր տաճարի առաջ կատարվեց մասնավոր հոգեհանգիստ, Ներսես Աշտարակեցի հայրենասեր կաթողիկոսի շիրմի վրա:

Ապա ժամը 18-ին Վեհարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:

Հոկտեմբերի 4-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի հյուրերն ու պատգամավորները այցելեցին Սարդարապատի հուշարձանախումբ:

Նույն օրը, ժամը 14-ին, Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը, հանուն Հայաստանի կառավարության, Երևանում ճաշկերույթ տվեց՝ ի պատիվ Հայոց Հայրապետի և Նրա հարգարժան հյուրերի:

Հոկտեմբերի 5-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդի մեծերգո նախագահ տիար Ֆադեյ Տ. Սարգսյանը ընդունեց պաշտոնական այցելությունը Հայոց Հայրապետի, Տ. Պիմեն Համայն Ռուսիո Սրբազան Պատրիարքի, տ. Շնորհք սրբազան պատրիարքի, վրաց եկեղեցու պատգամավորության, հայ եկեղեցու թեմական առաջնորդների և Մայր Աթոռի հյուրերի:

Այս առթիվ ճառեր փոխանակեցին Հայոց Հայրապետը, Տ. Պիմեն Պատրիարքը, Հայաստանի հանրապետության մեծարգո վարչապետը և Մայր Աթոռի հյուրերից ոմանք:

Հոկտեմբերի 7-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհարանում Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվեց եպիսկոպոսաց խորհրդակցություն, ուր տեղի ունեցավ կարծիքների փոխանակում մի շարք ազգային-եկեղեցական հարցերի շուրջ: Խորհրդակցության մասնակիցները խնդրեցին Հայոց Հայրապետին առաջիկա տարի Մայր Աթոռում հրավիրել Եպիսկոպոսական ժողով:

Հոկտեմբերի 8-ին, կիրակի օրը, առավոտյան, Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքը:

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Կ. Պոլսի տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակին:

Հոկտեմբերի 9—14 օրերին Մայր Աթոռի հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները հրաժեշտ տվեցին Մայր Աթոռին, Հայոց Հայրապետին և մեկնեցին անմոռաց տպավորություններով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
15 հոկտեմբերի 1978 թ.